

Յարգելի Եղբայր

Իգնատիոս Պետրոս Ժ.Ձ. Պաք-անեան

Պատրիարք Հայոց Տանն Կիլիկիոյ

Սիրով ստացանք այն նամակը, որով Մեզի կը հաղորդէիք թէ հայ հասարակութիւնները, աշխարհիս մէջ, կը պատրաստուին յիշատակելու գոհաբերումը իրենց նախնիներուն, եւ պիտի աղօթեն խաղաղութեան եւ իրենց սիրելի ննջեցեալներուն յաւիտեական հանգստեան համար:

Կը գնահատենք որդիական այս բարեպաշտ մտածումը, եւ պիտի չքերանամք միացնելու Մեր աղօթքը ա՛յն աղօթքներուն, զորս պիտի բարձրացնեն առ Աստուած, այս առիթով, ճիշդ հաւատացեալները:

Ինչպէս գիտե՛ք, Մենք ձեզ հրաւիրած ենք Պատարագի սուրբ Խորհուրդը մատուցանելու, առաջիկայ Նոյեմբեր 18ին, ընդհանուր գումարումին սկիզբը: Խնդրեցինք աշխարհիս բոլոր Եպիսկոպոսներէն, որոնք ներկայ պիտի ըլլան նոյն օրը Ս. Պետրոսի մայր Տաճարին մէջ, միանալու աստուածային Զոհին, որուն Մենք եւս կը բաղձանք մասնակցիլ, աղերսելու համար Աստուծմէ ուղորմութիւնը՝ ննջեցեալներուն համար, եւ առատութիւնը իր պարգևներուն՝ ի նպաստ Մեր Հայ գաւակներուն:

Յիշատակի բարեպաշտ այս զգացումներով, որոնք կը յայտնաբերեն նաեւ Մեր բարձր գնացատանքը հայ ժողովուրդին հանդէպ, որ պահապանն է քրիստոնէական ազնուական եւ հինաւորաց աւանդութիւններուն, ձեզի կը շընորհենք մեծ սիրով, ինչպէս նաեւ եպիսկոպոսներուն, քահանաներուն եւ հաւատացեալներուն, Մեր հայրական առաքելական օրհնութիւնը:

Վատիկան, 14 Նոյեմբեր 1964

ՊՕՂՈՍ Զ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

ԱՊՐԻԼԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ

ՄԻ ԼՍՆԻ ՄԷՁ

Նաւակատիւ

24 Ապրիլ, 1965: Միլանոյի հայաթիւնը
խանդավառ կը կարդայ Le Monde թերթի
յօդուածը, ստորագրութեամբ Փ ր ո Ֆ .
Թրետ . Գէյտիի: Նոյն յօդուածը իտալե-
րէն կը կարդանք նաեւ La Stampa թեր-
թին վրայ: Գաղութը ամբողջ մեծ պա-
տրաստութեան մէջ է վաղւա՛ն բացառիկ
հանդէսին: Միլանոյի Մայր տաճարի մայր
դերան վրայ, առաւօտէն իւր ծածանի հըս-
կայական պատտառ մը, կարմիր թաւիչէ,
որուն վրայ, սպիտակ խորքի մէջ կը կար-
դացուի կարմրատառ ծանուցում մը եւ
հրաւէր հայ Ժողովուրդին կողմէ՝ մաս-
նակցելու յիսնամեակի փառապանծ ողե-
կոչումին, հայ միլիոնաւոր մարտիրոսնե-
րու յիշատակը միասնաբար կատարելու
Տուոմոյի մէջ, մասնակցութեամբ քաղա-
քին Ծիր . Արքայսի . Քոլոմպոյի, մինչ պի-
տի պատարապէ Ծիր . Աղաճանեան: Հա-
րիւր հազարաւոր մարդիկ կը կարդան ու
կը խորհրդածեն այն ահաւոր ողբերգու-
թեան մասին որ յիսուն տարի առաջ դոր-
ծուած է բնաջնջելու համար հայ շինարար
ու հաւատարիմ Ժողովուրդը:

Իտալիոյ զանազան քաղաքներէն Միլան
կը ժամանեն բազմահարկէր հայորդիներ,
չատերը զաւակներ նահատակներու, ու
բոնք անապատներու մէջ քաղէին ետք,
այժմ հպարտանքով կը կոխեն Իտալիոյ
հողին վրայ. բժիշկներ, ճարտարապետ-
ներ, գեղարուեստագէտներ, վաճառա-
կաններ:

Առաւօտեան արարողութիւնը

25 Ապրիլ, 1965: Կարմիր Կերակի: Կը
Էարձէին՝ թէ 1965ին, ջարդերէն յետոյ
տարի ետք, հայտ ահուհն իսկ տուող սիւ-

տի չզանուել: Բայց յիսուն տարի ետք,
դարձեալ կու գայ Կարմիր Կիրակին. այս
անգամ մեր յաղթանակի Կարմիր Կիրա-
կին, նուիրականացած նահատակներու
զաւակներու զոհողութեամբ ու միասնա-
կան մթնոլորտի մէջ համերաշխ սիրոյ ծա-
ղիկներով զարդարուած, պտուղը մեր ան-
ցին հերոսներուն:

ԱՌԱՆՈՒՄԵԱՆ ԿԸ ՀԱՍՆԻ ՀՈՌՄԷՆ ՎԱՅԻՓ.
ԾԻՐ. Աղաճանեան, եւ հայ աւագանին օ-
ղակայան փութացած է, ողջունելու մե-
ծանուն եկեղեցականը: Հաղիւ ոտքը հո-
ղին վրայ դրած, կուրծքէն կը կախուի
նահատակաց յիշատակի ոսկէ մետալը,
հանուրին խանդավառութեան մէջ:

Վսեմ. Ծիրանաւորը ընդունելու եկած էին երկու խաւացի Գերապայծառներ, քաղաքին Արքեպիսկոպոս Ծիրանաւորին կողմէ. Ծիրանաւոր Աղաճանեան նախ կը լուծայ արքեպիսկոպոսարան, ողջունելու քաղաքին Ծիրանաւորը. եւ խալոյն կ'ուզուի զէպի Հայոց Եկեղեցին, Վիա Եոմմէլլի, ուր սուրբ պատարագով հայ ժողովուրդը կը տօնէ իր նահատակները: Եկեղեցին լինէ է, երգ ու աղօթք, մոմ ու խունկ, շարական, կը բարձրանան ամէնուն սրտէն: Կը պատարագէ Գերշ. Զրօն Սրբոյ. «Քրիստոս պատարագեալ»ի աւանուն, Ծիր. Աղաճանեան մուտք կը գործէ եկեղեցի. Երկու կարգ շարուած են Մուրատ-Ռափայէլեանի աշակերտները, կուրծքերնին յիշատակի մետաղներով, իրենց վարժարանի դրօշակով. կը հետեւին Մխիթարեան Վարդապետներ: Ծիր. Աղաճանեանի կ'ընկերանայ նաեւ Գրպծ. Յակոբ Ծ. Վ. Կիրակոսեան եւ Գերշ. Տ. Յովսէփ Ծ. Վ. Գաֆթանճեան, Հոռմէն: Սուրբ պատարագը պահ մը կ'ընդհատուի.